ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության
տեսության և պատմության ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 39:37

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Բանալի բառեր. էթնոմանկավարժություն, ընտանիք, արժեքներ, դաստիարակություն, արժեբանություն, բանահյուսություն, ծես, ավանդույթ:

Ключевые слова: этнопедагогика, семья, ценности, воспитание, аксиология, фольклор, ритуал, традиция.

Key words: ethnopedagogy, family, values, education, axiology, folklore, ritual, tradition.

«Ընտանեկան արժեբանություն» առարկայի դասավանդման հայեցակարգը

Մեր օրերում ընթացող համաշխարհայնացման գործընթացներով պայմանավորված սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական վերափոխումներն անդրադառնում են ընտանեկան կառույցների զարգացման գործընթացի վրա և նոր պահանջներ են առաջադրում մանկավարժական գիտությանը կրթական գործընթացը ժամանակի պահանջներին համապատասխան իրականացնելու համար: Ընտանիքը պահպանելու, պետականությունն ամրապնդելու և համաշխարհային կրթական միջավայրում ներդաշնակորեն ընդգրկվելու համար հայ հասարակության համար առաջնահերթ նշանակություն ունի էթնոմանկավարժության համակարգի մաս կազմող ազգային մշակույթում արտացոլված ընտանեկան արժեքների ավանդումը երիտասարդ սերնդին:

Կարևորելով ընտանեկան արժեքների դաստիարակչական նշանակությունը և աճող սերնդի արժեհամակարգի ձևավորման հրամայականը՝ մշակվել է «Ընտանեկան արժեբանություն» փորձնական դասընթացի ծրագիրը, որը նախատեսված է հանրակրթական ավագ դպրոցում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների համար:

Ծրագրի իրականացումը կնպաստի մարդու և քաղաքացու համակողմանի զարգացման գործընթացին, սովորողի անձի մարդասիրական որակների և արժեհամակարգի ձևավորմանը: Նախատեսվում է, որ դասընթացի մասնակիցների մեջ ազգային և համամարդկային էթնոընտանեկան մշակույթների նկատմամբ հարգանքի

ձևավորումը դրականորեն կանդրադառնա նրանց կողմից ապագայում ընտանիք կազմելուն և պահպանելուն ուղղված առողջ վարքագիծ դրսևորելուն:

Աճող սերնդի մեջ ընտանեկան արժեհամակարգի վերաբերյալ գիտելիքների առկայությունը կնպաստի ՀՀ-ում ընտանեկան դաստիարակության միջոցով պետության՝ ընտանիքի պահպանմանն ուղղված քաղաքականության արդյունավետ իրականացմանը:

«Ընտանեկան արժեբանություն» դասընթացի դասավանդման ***նպատակն է*** սովորողներին գիտելիքներ հաղորդել ազգային և համամարդկային ընտանեկան արժեքների մասին:

Դասընթացի ***խնդիրներն են՝***

- սովորողներին ծանոթացնել ընտանիքի ձևավորման և զարգացման պատմությանը,
- գիտելիքներ հաղորդել ժամանակակից ընտանիքի դերի ու գործառույթների վերաբերյալ,
- ծանոթացնել ազգային և համամարդկային մշակութային ժառանգության մեջ արտացոլված ընտանեկան արժեքներին:

Ակնկալվող վերջնարդյունքները՝

- սովորողները համակարգված գիտելիքներ կունենան ընտանիքի կենսաբանական և սոցիալական գործառույթների մասին, պատկերացում կունենան դրա առաջացման և զարգացման ընթացքի վերաբերյալ,
- կիմանան ընտանեկան արժեքների, ծեսերի, սովորույթների և ավանդույթների ծագման ու նշանակության մասին,
- մարդասիրական վերաբերմունքի կձևավորվի «ընտանիք» կենսասոցիալական կառույցի նկատմամբ,
- կզարգանա մարդ-բնություն-հասարակություն փոխհարաբերություններն ընկալելու, արժևորելու կարողությունը,
- պատկերացում կունենան մարդկային և մասնավորապես ընտանեկան արժեքների համակարգի մասին՝ որպես կյանքում առաջնորդվելու ուղեցույց,
- կարժևորեն ծնող-երեխա փոխհարաբերություններն ըստ նախնիների կուտակած փորձի, կգիտակցեն այդ փորձի ժառանգման և փոխանցման դերը,
- կձևավորվի անձնական, ընտանեկան և հասարակական, կյանքում ծնվող տարբեր իրավիճակներն ինքնուրույն վերլուծելու կարողություն, կկարողանան առողջ վարքագիծ հանդես բերելով՝ հաղթահարել բախումային իրավիճակները,

• կգիտակցեն մարդասիրական արժեհամակարգի ժառանգման և փոխանցման գործընթացի պատասխանատվությունը,

• կկարողանան բազմամշակութային աշխարհում հարգալից երկխոսության մեջ մտնել տարբեր մշակույթների ներկայացուցիչների հետ և առաջնորդվել մարդասիրության սկզբունքներով,

• ամանակակից փոխակերպվող հասարակությունն առաջիկա սերնդափոխության ընթացքում կունենա ընտանիքի վերաբերյալ մտահորիզոնի զարգացվածության բարձր մակարդակով սերունդ, որն ունակ կլինի ապահովելու հասարակության բնականոն զարգացումը. արդյունքում կամրապնդվի ազգային ինքնապաշտպանական համակարգը:

Դասավանդման մեթոդաբանությունը

• Դասի ընթացքում նյութի մատուցում ընդհանուր բացատրության միջոցով, քննարկվող գաղափարների հաղորդում առանց պատրաստի եզրահանգումների: Ամփոփիչ եզրահանգումներ անել սովորողների հետ խմբային աշխատանքի միջոցով:

• Սովորողների ճանաչողական, ուսումնահետազոտական գործունեության նպաստում, որպեսզի դասընթացի շնորհիվ նրանք հնարավորինս ինքնուրույն հարստացնեն իրենց գիտելիքները:

• Ուսումնական նյութի բացատրում, թեմայի մասին տեղեկատվության որոնում համակարգչով, հանրագիտարանների, օժանդակ այլ նյութերի օգնությամբ:. Տպագիր և էլեկտրոնային տեղեկատվության կուտակում, համակարգում, մշակում:

• Նյութերի դիտում, ունկնդրում, քննարկում, բանավեճերի և զրույցների անցկացում:

• Տեղեկատվական նյութերի օգնությամբ քննարկվող նյութի (ժողովրդական բանահյութության ժանրեր, նկար, ծիսական արարողություններ) ձևավորման ժամանակաշրջանի վերարտադրման փորձ, արվեստի տարբեր գործերի ուսումնասիրում, երաժշտության ունկնդրում, կերպարվեստի ստեղծագործությունների դիտում և մեկնաբանում:.

• Բնագրային նյութերի շուրջ ուսումնահետազոտական աշխատանքներ կատարելու փորձեր և դրանց ներկայացում:

• Էթնոընտանեկան իրողությունների /ավանդույթներ, սովորույթներ, ծիսական արարողություններ, տոներ/ վերլուծություն:

• Դասավանդողի և սովորողի միջև հետադարձ կապի ապահովում:

• Դասավանդողի և սովորողի ծնողների միջև կապի ապահովում: Ծնողների ներգրավում պարապմունքներում:

«Ընտանեկան արժեքաբանություն» դասընթացը ներառում է՝

• տեքստային աշխատանք՝ բնագրերի ընթերցում, դիտում, քննարկում,

• ամփոփիչ սեմինարներ,

• դասընթացն ավարտվում է հարցազրույցով, սովորողների ստացած գիտելիքների ուսումնասիրմամբ, ամփոփիչ թեստավորմամբ և թեմատիկ շարադրանքով:

Դասընթացի կառուցվածքը և թեմատիկ տրոհումը /ժամաքանակը տրամադրվում է ըստ հենքային ուսումնական ծրագրի դպրոցական բաղադրիչի ընձեռած հնարավորության/

	Թեմայի անվանումը	***Ժամաքանակ***	***Դասի նպատակը***	***Ուսումնական գործունեություն***
1.	Ընտանեկան արժեքների վերաբերյալ սովորողների գիտելիքների ուսումնասիրում գրավոր շարադրանքի միջոցով: Ընտանիքի առաջացումն ու զարգացումը	1	Սովորողներին հաղորդել գիտելիքներ ընտանիքի և մարդկային հասարակության զարգացման մասին: Բացատրել անհատ-ընտանիք-հասարակություն կապը	Անհատական աշխատանք՝ շարադրանք ընտանեկան արժեքների վերաբերյալ
2.	Կինը, տղամարդը և ընտանիքը Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդների վիպերգերում *(Հայա, Կումարբի, Ուտնափիշտիմ), Եգիպտական դիցբանությունում (Օզիրիս, Սեթ, Նեֆերտիտի, Էխնաթոն)*	2	Ծանոթացնել Մերձավոր Արևելքի ժողովուրդների մշակույթում առկա ընտանեկան արժեքներին: «Գիլգամեշ» վիպերգը: Պատմությունից և գրականությունից անցած նյութերի վերհիշում և դրա հիման վրա կերպարների, նկարագրերի վերլուծություն՝ ըստ դաստիարակչական նշանակության	Աշխատանք զույգերով՝ տեղեկատվական նյութերի հիման վրա վիպերգի կերպարների ընտանեկան նկարագրի վերլուծություն
3.	Ընտանիքը հունական դիցաբանությունում. Քրոնոս, Զևս, Հերակլես, Պրոմեթևս	2	Ծանոթացնել հելլենական դիցաշխարհին: Տրոյական պատերազմ և ընտանեական արժեքների ըմբռնում	Ուսումնահետա-զոտական աշխատանք՝ ուսումնասիրված նյութերի հիման վրա ընտանեական արժեքների սահմանում և դասակարգում

4.	Ընտանիքը Հին Հռոմում. Հռոմի ընտանեկան իրավունքը	1	Ծանոթացնել հին հռոմեական ընտանիքին և օրենսդրությանը/թագավորական, հանրապետական, կայսերական շրջաններ/: *Ընտանեկան արժեքների արտացոլումը «Էնեական» պոեմում (Էնեաս, Անքիզես, Ասկանիոս)*	Խմբային աշխատանք՝ ծնող-երեխա-հասարակություն կապի և փոխազդեցության քննարկում
5.	Ընտանիքը հին Եվրոպայում՝ ըստ գերմանական, սլավոնական, կելտական բանահյուսական գործերի	1	Ծանոթացնել գերմանասկանդինավյան և սլավոնական դիցաշխարհին, ընտանեկան արժեքներին. Օդին, Վանադիս-Ֆրեյա, Պերուն, Լադա	Հանձնարարված տեքստերի վերլուծություն: Խմբային բանավեճ մայրիշխանական և հայրիշխանական ընտանիքների վերաբերյալ
6.	Ընտանիքը նարտերի վիպերգում: Կովկասյան ժողովուրդների առնչություններն Արարատյան Երկրի հետ	2	Ծանոթացնել կովկասյան ժողովուրդների ընտանեկան մշակույթին: Սաթենիկի, Խանդութ Խաթունի, Սոսլանի, Արամ-Խութուի, Արտավազի կերպարների համեմատական վերլուծություն	Ուսումնահետա-զոտական աշխատանք՝ համացանցից գտնել թեմայի վերաբերյալ նյութեր/տեքստային, երաժշտություն, նկարներ և այլն/
7.	Ընտանիքը Ֆիրդուսու «Շահնամե» ստեղծագործությունում	2	Ծանոթացնել իրանական մշակույթում արտացոլված ընտանեկան արժեքներին	Դիտել հատվածներ «Ռոստամ Զալ» ֆիլմից և քննարկել ընտանեկան փոխհարաբերություն-ների դրսևորումները
8.	Ընտանիքը Հնդկաստանում: Թաջ Մահալ	2	Ծանոթացնել հինդուիզմի ընտանեկան արժեքներին: Տեղեկություններ հաղորդել Թաջ Մահալի կառուցման շարժառիթների վերաբերյալ	Ընտանեկան արժեքների վերաբերյալ ինտերակտիվ քննարկում և բանավեճ
9.	Ընտանիքը Չինաստանում և Ճապոնիայում	1	Ծանոթացնել կոնֆուցիականության և սինտոիզմի մեջ արտացոլված ընտանեկան արժեքներին: Կոնֆուցիուսի «ժենի համակարգը»	Ուսումնահետազոտական աշխատանք հանձնարարված նյութերի շուրջ
10.	Ընտանիքը Մերձավոր Արևելքի հոգևոր գրականության մեջ/ Աստվածաշունչ, Ղուրան/	2	Ծանոթացնել ընտանեկան փոխհարաբերություններն արտացոլող Հին և Նոր Կտակարանների, Ղուրանի որոշ հատվածների մանկավարժական տեսանկյուններին	Պատմագիտական և կրոնական բովանդակությամբ նյութերի ընթերցում, քննարկում, բանավեճ
11.	Ավանդույթի, ծեսի, դիցաբանության ու վիպերգի	2	Ծանոթացնել ավանդույթի, ծեսի, դիցաբանության և վիպերգի ծագման	Խմբային աշխատանք՝

	նշանակությունը հինավուրց աշխարհում		վերաբերյալ տեսակետներին ու կենսասոցիալական նշանակությանը	ներընտանեկան փոխհարաբերություն ները տարբեր մշակույթներում
12.	Տղամարդը և կինը հայ դիցաբանության մեջ: Սերն ու հարգանքը ծնողի հանդեպ՝ որպես ընտանեկան արժեք	2	Քննարկել դիցուհի Աստղիկի, էպիկական Խանդութի մոնոգամ կենսադիրքորոշումը	Աշխատանք զույգերով՝ հակադիր կերպարների օրինակներ և մեկնաբանություն
13.	Հայ ընտանիքը: Սերն ու հարգանքը երեխայի հանդեպ՝ որպես ընտանեկան արժեք	2	Մանկավարժական տեսանկյունից արժևորել հայ ընտանիքում ծնող-երեխա կենսասոցիալական և բարոյահուզական կապերը	Ծնող-երեխա կապն արտահայտող նյութերի հիման վրա գրել էսսե
14.	Մենամուսնությունը՝ որպես ընտանեկան արժեք «Սասունցի Դավիթ» դյուցազներգության երկրորդ և երրորդ ճյուղերում: Մեծ Միհրի և Դավթի մահվան պատճառները	2	Արժևորել ամուսնական հավատարմությունը և հանուն ազգի ապագայի ինքնազոհաբերման ձգտումը՝ որպես գիտակցված էթոսընտանեկան արժեքներ: Էպիկական հերոսների մահվան պատճառները	Բնագրի վերլուծություն, հանձնարարված հատվածների և «Առյուծն առյուծ է՝ էգ լինի, թե որձ» խրատի մեկնաբանում
15.	Ընտանեկան հավատարմությունը, ժողովրդասիրությունը, հայրենասիրությունը՝ որպես ընտանեկան արժեքներ	2	Քննարկել հայ ընտանեկան արժեքների արտացոլմանը «Սասնա ծռեր» վիպերգում, մեկնաբանել դրանց դաստիարակչական նշանակությունը	Գործնական խաղ՝ էթնիկական և ընտանեկան արժեքների կապի ներկայացում և ամփոփում
16.	Ընտանիքի անդամների ներդաշնակ հարաբերությունները և ազգակցական կապը՝ որպես ընտանեկան արժեքներ	2	Անդրադառնալ հայ ժողովրդական հեքիաթներում արտացոլված ընտանեկան հարաբերություններին	Ուսումնահետազոտական աշխատանք՝ ուսումնասիրած բնագրային նյութերի վերլուծություն
17.	Հայկական ընտանեկան ծեսեր, ավանդույթներ: Հյուրասիրությունը և հյուրընկալությունը՝ որպես ընտանեկան արժեք	2	Ծանոթացնել ընտանեկան ծեսերին, ավանդույթների բովանդակությանը, մեկնաբանել դրանց նշանակությունը էթնիկական սոցիալականացման տեսանկյունից	Հանձնարարել պսակադրության խորհուրդի վերլուծություն: Հարսանիք:
18.	Էթնոմասունքների պահպանումը և գրապաշտությունը՝ որպես ընտանեկան արժեքներ	1	Ազգային մասունքների պահպանումն ու փոխանցումը /մշակութային տրանսմիսիա/՝ որպես ընտանեկան արժեքների ժառանգորդության և էթնիկական սոցիալականացման միջոց	Կազմակերպել բանավեճ՝ «Ինչու՞ է սրբացվել Մեսրոպ Մաշտոցը և ոչ թե աշխարհակալ որևէ հայ արքա»

19.	Ծովինարի, Մեծ Միհերի, Փոքր Միհերի ինքնազոհությունն ու դպրասիրությունը՝ որպես ընտանեկան արժեքներ	1	Մեկնաբանել «ազատ ընտանիք» և «ազատ ազգ» հասկացությունների փոխկապակցվածությունը, «հավատ» և «ֆանատիզմ» երևույթները:	Խմբային աշխատանք՝ Մարութա վանքի կառուցման և վերանորոգման պատճառների ուսումնասիրում և քննարկում
20.	Մսրա Մելիք և ազգայնամոլություն: Սասունցի Դավթի ազգասիրությունը: Մարդասիրությունը՝ որպես ընտանեկան արժեք	1	Ծանոթացնել կենսատարածք, հայրենիք, ազատություն, շովինիզմ, ֆաշիզմ հասկացությունների բովանդակությանը: Արժևորել մարդասիրությունը՝ որպես ընտանեկան արժեք	Բնագրային աշխատանք՝ վերլուծել ազգային-ազատագրական հարցերի արտացոլումը վիպերգում, մեկնաբանել Իսմիլի խրատները որդուն
21.	Բնապահպանությունը՝ որպես ընտանեկան և համամարդկային արժեք	1	Ծանոթացնել բանահյուսական այն ժանրերին, որոնցում արտացոլված է մարդ-բնություն կապի դաստիարակչական նշանակությունը	Խմբային աշխատանք՝ Որսասարի պարիսպը քանդելու պատճառների քննարկում
22.	Դասընթացի ամփոփում: Ժամանակակից ընտանիքի արժեքները, ավանդականի և նորի հարաբերակցությունը: Ազգային և համամարդկային ընտանեկան արժեքների պահպանումը փոխակերպվող հասարակության մեջ:	1	Ամփոփել դասընթացը ընտանեկան արժեհամակարգի վերաբերյալ սովորողների ինքնուրույն դատողությունների և եզրահանգումների միջոցով	Թեստային աշխատանք: Ամփոփիչ էսսե

Գրականություն

Հիմնական

1. Էթնոմանկավարժություն: Ուսումնական ուղեցույց/Կազմ.՝ Գրետա Հակոբյան -Եր.: Արտագերս, 2015, -152 էջ:
2. Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում: Ուսումնա-մեթոդական ձեռնարկ/ Ասատրյան Լ.Թ., Ավագյան Լ.Գ., Սահակյան Ա.Ս. -Եր.: Զանգակ-97, 2003, -120 էջ:
3. Մանկավարժություն Լ.Թ. Ասատրյան, Գ.Հ. Հակոբյան, Մ.Ա.Ասատրյան, Մ.Մ. Գևորգյան, Ն.Զ.Կարապետյան, Ա.Ս. Բաղդասարյան -Եր.: «Արտագերս» 2017, - 360 էջ:

4. Оганисян Н.Т. «Педагогическая психология» -М.: «Кнорус», 2006, -328 с.

5. Розум С.И. Психология социализации и социальной адаптации человека. - СПб., 2006. – 345 с.

6. «Социальная педагогика» -Свердловск: Изд-воУрал. Ун-та, 1989. -148 с.

Լրացուցիչ

1. Աստուածաշունչ, Լոնտոն, Աստուածաշունչի բրիտանական եւ արտաքին ընկերություն, 1959, - 1424 էջ:

2. Գիլգամեշ, -Եր.: Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1963, -124 էջ:

3. Կուն Ն. Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, -Եր.: Հայաստան, 1979, -591 էջ:

4. Հայ ժողովրդական հեքիաթներ, 1 հատոր, -Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1959, -670 էջ

5. Հին և միջնադարյան Հայաստանի պատմավիպական հերոսները, -Եր.; Լույս, 1990, -365 էջ:

6. Հոմերոս, Ոդիսական, -Եր.: Երևանի համալս. հր., 1988, -416 էջ:

7. Ղազարյան Ջ.Ա. Բարոյական սկզբունքները «Սասունցի Դավիթ» էպոսում, -Եր.: Հայաստան, 1976, -176 էջ:

8. Ռոստամ և Սոհրաբ, Ֆիրդուսի -Եր.: Հայաստան 1967, -180 էջ:

9. Սասնա Ծռեր, -Եր.: Սովետական գրող, 1977, - 700 էջ:

10. Былины -М.: Гос. изд-во художественной литературы, 1958, -564 с.

11. Вернер Эдвард Мифы и легенды Китая, էլեկտրոնային հասցե՝ https://www.e-reading.club/book.php?book=1005091

12. Коран, Редакционно-изд. отдел Таджикского республиканского отделения Советского фонда культуры, (Внешторгиздат) 1990, -448 с.

13. Луна, упавшая с неба (Древняя литература Малой Азии), -М.: Художественная литература, 1977, -317 с.

14. Нарты, эпос осетинского народа, , Москва, Изд-во академии наук СССР 1957 г, -394 с.

15. Сага о Волсунгах, Academia Москва-Ленинград, 1934, -288 с.

16. Хэдленд Дэвис, Мифы и легенды Японии, էլեկտրոնային հասցե՝ https://www.e-reading.club/book.php?book=1003390

Ա. Մանուկյան

«Ընտանեկան արժեբանություն» փորձնական դասընթացի ծրագիր

Ամփոփում

Հոդվածում ներկայացված են հանրակրթական ավագ դպրոցում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «Ընտանեկան արժեբանություն» փորձնական դասընթացի դասավանդման հայեցակարգը և դասընթացի բովանդակությունը: Ըստ թեմաների բնութագրված են ուսուցման նպատակը, սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման ձևերն ու մեթոդները:

А. Манукян

Программа экспериментального курса «Семейная аксиология»

Резюме

В программе описываются цели, задачи и ожидаемые результаты обучения семейным ценностям. Расскрыто содержание учебной дисциплины для учащихся старших классов общеобразовательной школы и средних специальных учебных заведений. Предложены предпочтительные способы организации дидактического процесса обучения дисциплине «Семейная аксиология».

A.Manukyan

«Family Axiology» Pilot Course Syllabus

Summary

The programe presents the goal of teaching family values, and the challennges and solutions in doing so. A syllabus is developed for public high schools and colleges. Preferred methods are suggested for orgnising the deductive activity of teaching «Family Value» studies.